


ԱՐԱՄԱՅԻՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ՊԱՅԾԱՌ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Posted on May 10, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Նոր Ջուղայի և Շահինշահրի ընկերներ, 28 Ապրիլ 2013

Թվականիս Ապրիլի 11-ին 70 տարեկան հասակում կյանքից հեռացավ իրանահայ մտավորական, հասարակական գործիչ և համալսարանի դասախոս Արամայիս Միրզախանյանը:

Արամայիսը ծնվել էր Սպահանի երբեմնի հայաբնակ Փերիա գավառի Նամագերդ գյուղում, տարրական և միջնակարգ կրթությունը ստացել էր Նոր Ջուղայի հայոց դպրոցներում, այնուհետև ավարտել էր Երևանի պոլիտեխնիկական համալսարանը ստանալով էլեկտրոտեխնիկայի դոկտորական կոչում:

Տարիներ նույն համալսարանում դասավանդելուց հետո Արամայիս Միրզախանյանը 1979 թվին տիկնոջ Ջոկոնդայի և դստեր Մանուշի հետ վերադառնում է Իրան և աշխատանքի է անցնում Սպահանի «Սանաթի» համալսարանում:

Այս, թեկուզ և ոչ այնքան երկարատև ժամանակաշրջանում նա ակտիվ մասնակցություն է բերում Նոր Ջուղայի և Շահինշահրի հայ հասարակական կյանքին, կատարելով կազմակերպչական ազդեցիկ դեր համայնքի մեջ ծավալված ժողովրդական շարժման, ժողովրդական ժամանակավոր Կոմիտեի (ԺԿԿ), ինչպես նաև Իրանահայ Ազգային և Մշակութային Միության (ԻԱՄՄ) Նոր Ջուղայի մասնաճյուղի հիմնադրման գործում:

Այնուհետև քաղաքական պայմանների բերումով ընտանյոք մեկնում է արտասահման և աշխատանքի է անցնում Ստոկհոլմի «The Royal Institute of Technology» համալսարանում:

Հայրենասիրությունը և սեփական ժողովրդի ճակտագիրը Արամայիսի համար բարձրագույն և անսակարկ արժեքներ էին, որոնց հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջը: Նա տևաբար կապի մեջ էր Մայր Հայրենիքի հետ: Իր սովորած համալսարանում հիմնել էր գիտական լաբորատորյա և հաճախ էր այնտեղ լինում գիտական դասախոսություններ կարդալու:

Արամայիս Միրզախանյանը գործոն մասնակցություն ունեցավ նաև արցախյան ազատամարտի ընթացքում, նախաձեռնող հանդիսանալով Շվեդում մարդասիրական օգնության կազմակերպման և Արցախ փոխադրելու գործում:

Արամայիսը հայրենի ժողովրդի ապագան տեսնում էր արդար և ժողովրդավար պետության մեջ և վերջին շրջաններում խիստ անհանգստանում էր Հայաստանում տիրող քաղաքական-հասարակական հոռի երևույթներին ի տես և իր հանդուզն ու անաչառ վերաբերմունքն էր արտահայտում բազմաթիվ հոդվածներով:

Նա ազնիվ էր և սկզբունքային: Նրա հզոր, տիտանական արտաքինի տակ բաբախում էր խիստ բարի և հուզառատ մի սիրտ: Նա ապրում էր բանաստեղծությամբ, զբաղվում

Եր գեղանկարչությանը: Կարոտում էր իր ծննդավայր Նամագերդ Գյուղին:

Հարգանք նրա պայծառ հիշատակին և մխիթարություն նրա ընտանիքին,
հարազատներին ու ընկերներին:

